ԱԶՀ-ՎԱ-1
18.12.2014թ.

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊՈԱԿ-Ի ՀԵՏ ԱՎԻԱՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ
ԿՆՔԱԾ ԱՆՁԱՆՑ

Հարգելի պարոն/տիկին,

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1 ծածկագրով ընթացակարգի շրջանակում Արդյունաբերության զարգացման հիմնադրամի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ծառայությունները:

Ծառայության մատուցումն իրականացվում է սույն գրությանը կից ներկայացված պայմանագրի նախագծով սահմանված կարգով:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք.Երևան, Մ.Մկրտչյան 5 հասցեով, N 819 սենյակ Արտակ Պողոսյանին, մինչև 2014 թվականի դեկտեմբերի 27-ը, ժամը 11:30-ն:

Հայտերը կբացվեն Արդյունաբերության զարգացման հիմնադրամի գրասենյակում, ք.Երևան, Մ.Մկրտչյան 5 հասցեով, N 819 սենյակում, 2014 թվականի դեկտեմբերի 27-ին, ժամը 11:30-ին:

Հայտերը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԱԶՀ-ՇՀԱՊՁԲ-11/1-14/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և Ձեր կողմից ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Ընտրված մասնակիցը պայմանգիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ հինգ օրացուցային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և Պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է Պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները Պատվիրատուին ներկայացվում է ընտրված մասնակիցը՝ մինչև ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168 որոշմամբ 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ «Կարգ») 110-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

- նման պահանջի դեպքում մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած Պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Առդիր՝ 12 (տասներկու) էջ:

Հարգանքով՝

ՏՆՕՐԵՆ

ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ

ՀԻՄՆԱԴՐԱՄ
ФОНД
FOUNDATION
02708020

Հավելված 1
ԱԶՀ-ՇՀԱՊՁԲ-11/1-14/1 ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Դ Ի Մ Ո Ւ Մ

Գ Ն Մ Ա Ն Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ Ի Ն Մ Ա Ս Ն Ա Կ Ց Ե Լ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն

_____հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

Արդյունաբերության զարգացման հիմնադրամի կողմից ԱԶՀ-ՇՀԱՊՁԲ-11/1-14/1 ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի ..... չափաբաժնին (չափաբաժիններին) և
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____ -ի էլեկտրոնայանին փոստի հասցեն է՝ <<Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե>>:
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 2
ԱԶՀ-ՇՀԱՊՁԲ-11/1-14/1 ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ Ն Ի Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված ԱԶՀ-ՇՀԱՊՁԲ-11/1-14/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,
_____-ն առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
հետևյալ գներով.

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Առաջարկված գինը /տառերով և թվերով/***
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>			
…	…			

** 3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*
*** Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*
***** Առաջարկված գինը ներկայացվում է ամբողջ ծառայության համար:**

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

N ԱՋՀ-ՇՀԱՊՁԲ-11/1-14/1

Քաղ. Երևան «____» _____ 2014թ.

Արդյունաբերության զարգացման հիմնադրամը (այսուհետ՝ «Հիմնադրամ»), ի դեմս տնօրեն Հ. Միրզոյանի, ով գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ»), մի կողմից, և «_____» _____-ն, ի դեմս Ընկերության _____-ի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Վաճառող»)), մյուս կողմից, (Գնորդին և Վաճառողին միասին հիշատակման դեպքում, այսուհետ՝ «Կողմեր») կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1.Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և ժամկետներում Գնորդին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրով նախատեսված բենզինը (այսուհետ՝ «Ապրանք»), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2.Վաճառողը Ապրանքը մատակարարում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված Գնման ժամանակացույցով նախատեսված ծավալներով ու ժամկետներում, և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

1.3.Վաճառողը ապրանքը մատակարարում է Գնորդի կողմից նախանշված հասցեով (ք. Երևան):

1.4.Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը սույն պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Գնորդն իրավունք ունի՝

2.1.1. Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 3-րդ կետի պահանջներին և սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն, իր հայեցողությամբ սահմանելով ողջամիտ ժամկետ, անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման համար, և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 6.3. կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև սույն պայմանագրի 6.2. կետով նախատեսված տույժը.

գ) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը, եթե ապրանքի համար վճարվել է.

2.1.2. Եթե հանձնվել է սույն պայմանագրով սահմանվածից պակաս քանակի Ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու համապատասխան Ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը.

2.1.3. Եթե հանձնվել է գնորդի կողմից նշված տեսակին՝ սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին, չհամապատասխանող Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքից.

բ) հրաժարվել հանձնված ամբողջ Ապրանքից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 6.3. կետով նախատեսված տուգանքը.

գ) պահանջել ողջամիտ ժամկետում փոխարինել հանձնված Ապրանքը նշված տեսակին համապատասխանող Ապրանքով և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 6.3. կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև սույն պայմանագրի 6.2. կետով նախատեսված տույժը.

2.1.4. Եթե Վաճառողի կողմից խախտվել են մատակարարման ժամկետները՝

ա) իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 6.2. կետով նախատեսված տույժը.

բ) միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

2.1.5. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

2.1.5.1. Վաճառողի կողմից սույն պայմանագրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

2.1.6. Հրաժարվել հանձնված Ապրանքից, միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը, եթե ապրանքի համար վճարվել է, եթե Գնորդը հրաժարվում է Վաճառողին հանձնել Ապրանքի պատկանելիքները, համապատասխան փաստաթղթերը և սույն պայմանագրի 2.4.11. կետով սահմանված փաստաթղթերը:

2.2. Գնորդը պարտավոր է՝

2.2.1. Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները.

2.2.2. Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

2.2.3. Հանձնված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 6.5. կետով նախատեսված տույժը.

2.2.4. Ապրանքի քանակի, տեսակի, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.3. Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1. Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով մատակարարված Ապրանքը.

2.3.2. Գնորդից պահանջել վճարելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում հանձնված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

2.3.3. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Գնորդն էականորեն խախտել է սույն պայմանագիրը:

2.3.3.1. Գնորդի կողմից սույն պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4. Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

2.4. Վաճառողը պարտավոր է՝

2.4.1. Ապրանքն իր միջոցներով հասցնել գնորդին.

2.4.2. Գնորդին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համապատասխան Ապրանք.

2.4.3. Գնորդին Ապրանքը մատակարարել սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված Գնման ժամանակացույցով նախատեսված ծավալներով և ժամկետներում:

2.4.4. Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 2.1.1. կետի բ) ենթակետին, 2.1.3. գ) ենթակետին և 2.1.4. ա) ենթակետին համապատասխան.

2.4.5. Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

2.4.6. Գնորդին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն պայմանագրի 3-րդ կետի պահանջներին համապատասխան Ապրանք:

2.4.7. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 6.2. և 6.3. կետերով նախատեսված տույժը և տուգանքը.

2.4.8. Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը.

2.4.9. Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր.

2.4.10. Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 2.2.2. կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.11. Գնորդին ներկայացնել Ապրանքի ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի բնօրինակը և պատճենը:

2.4.12. Սույն պայմանագրի կատարման կանխավճարի ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.4.13. Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3. Ապրանքի որակը

3.1. Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը սահմանված նորմատիվ փաստաթղթերի պահանջներին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1. Սույն պայմանագրով Վաճառողի հանձնման ենթակա Ապրանքի գինը, կազմում է _____ (_____) ՀՀ դրամ, ներառյալ բոլոր հարկերը և պարտադիր այլ վճարները, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Յուրաքանչյուր միավորի գինը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված Գնման ժամանակացույցով:

4.2. Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ սույն պայմանագրի N 3 հավելվածով նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով, տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. Ապրանքի հանձնումը և ընդունումը

5.1. Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված ծավալներով և ժամկետներում:

5.2. Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից երկու աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ սույն պայմանագրի N 4 հավելվածով սահմանված օրինակելի ձևով:

5.3. Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվանից երկու աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4. Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2. Վաճառողի կողմից սույն պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման դեպքում Վաճառողից գանձվում է տույժ՝ սույն պայմանագրի գնի 0.05%-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ սույն պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.3. Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի ընդհանուր գնի 0.5%-ի չափով

6.4. Սույն պայմանագրի 6.2. և 6.3. կետով նախատեսված տույժը, տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

6.5. Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05%-ի չափով:

6.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Այլ պայմաններ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև սույն պայմանագրով Կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայֆության:

7.2. Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և/կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կֆքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղչող ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանջորեն լուծելու սույն պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կֆքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածտում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

7.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.4. Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, սույն պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի համաձայնագիր:

7.5. Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի օգուտները և/կամ վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Գնորդի հետ պայմանագիր կնքած անձը:

7.6. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7. Սույն պայմանագրով չնախատեսված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.8. Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները սույն պայմանագրի անբաժանելի մասն են:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«ԳՆՈՐԴ»	«ՎԱՃԱՌՈՂ»
Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	
ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5	
Հ/հ՝ 1930040359220100 «Կոնվերս բանկ» ՓԲԸ	
ՀՎՀՀ՝ 02708029	
_____ Հ. Միրզոյան	

Հավելված 1
«___» _____ 2014թ. կնքված
N ԱՋՀ-ՇՀԱՊՁԲ-11/1-14/1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1.	Ապրանիք անվանումը	Բենզին
		Ռեգուլյար
2.	Հիմնական տեխնիկական ցուցանիշները	Օկտանային թիվը 91
		Խտությունը՝ 15^0 C-ում՝ ոչ ավել 775կգ/մ^3
		Բենզոլի ծավալային մասը՝ 1%
3.	Ստանդարտ	ՀՀ կառ. որոշում 16.06.2005թ. N894-Ն Տեխնիկական կանոնակարգ
4.	Պայմանական նշանները	«Վախենում է կրակից»
5.	Տեղափոխման անվտանգությունը	Հրավտանգ
6.	Անվտանգություն՝ շրջակա միջավայրի համար	Կապարի պարունակությունը՝ ոչ ավելի 0.005 գ/լ
7.	Տեսքը	Մաքուր և պարզ
8.	Մատակարարումը	Կտրոնային
9.	Ժամկետը	Կտրոնների գործողության ժամկետը չպետք է պակաս լինի դրանց հանձնման օրվանից հաշված 12 ամսից:
10.	Վաճառողը համապատասխան կտրոններով բենզին մատակարարելու համար պետք է լիցքավորման կետեր ունենա Երևան քաղաքում (նվազագույնը հինգ լիցքավորման կետ) և նվազագույնը ՀՀ հինգ մարզերում:	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արդյունաբերության զարգացման հիմնադրամ

Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5

«Կոնվերս բանկ» ՓԲԸ

Հ/Հ՝ 1930040359220100

ՀՎՀՀ՝ 02708029

_____ Հ. Միրզոյան

ԿԱՏԱՐՈՂ

Հավելված 2
«___» _____ 2014թ. կնքված
N ԱՋՀ-ՇՀԱՊՁԲ-11/1-14/1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Բենզին	... %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	100 %	100 %

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արդյունաբերության զարգացման հիմնադրամ

Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5

«Կոնվերս բանկ» ՓԲԸ

Հ/Հ՝ 1930040359220100

ՀՎՀՀ՝ 02708029

_____ Հ. Միրզոյան

ԿԱՏԱՐՈՂ

Հավելված 3
«___» _____ 2014թ. կնքված
N ԱՋՀ-ՇՀԱՊՁԲ-11/1-14/1 պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանումը	Ապրանքի մատակարարումը՝ սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 35 աշխատանքային օրվա ընթացքում			
		Չափի միավորը	Միավորի գինը	Քանակը	Ընդամենը
1.	Բենզին	Լիտր		4800	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արդյունաբերության զարգացման հիմնադրամ

Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5

«Կոնվերս բանկ» ՓԲԸ

Հ/Հ՝ 1930040359220100

ՀՎՀՀ՝ 02708029

_____ Հ. Միրզոյան

ԿԱՏԱՐՈՂ

Հավելված 4
«___» _____թ. կնքված
N ԱԶՀ-ՇՀԱՊՁԲ-11/1-14/1 պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ **ԿԱՏԱՐՈՂ**

Արդյունաբերության զարգացման հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1930040359220100
ՀՎՀՀ՝ 02708029

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» _____ 2014թ.

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» _____ 2014թ.
Պայմանագրի համարը՝

Պատվիրատուն, ի դեմս Արդյունաբերության զարգացման հիմնադրամի ծրագրայի փորձագետ _____ և Կատարողն՝ ի դեմս _____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ապրանքների մատակարարումը (այսուհետև՝ Ապրանք) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագիր-գնման և վճարման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը «___» _____ 2014թ-ից «___» _____ 2014թ. ընկած ժամանակահատվածում մատակարարել է հետևյալ ապրանքը

Ապրանքի մատակարարման համառոտ նկարագիրը	Մատակարարման ցուցանիշները	Մատակարարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ ապրանքի մատակարարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
(ստորագրություն)

Ապրանքը ընդունեց

_____
(ստորագրություն)